BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street,
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
www.bakertillyarmenia.com
Email:
info@bakertillyarmenia.com

29.04.2013թ.
N 011309

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054 տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերին

Մենք իրականացրել ենք «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին, նույն ամսաթվին ավարտված տարվա Համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՆՄՍ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

BAKER TILLY
ARMENIA

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշգրիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ) համաձայն:

Հանգամանքների լուսաբանում

Առանց մեր կարծիքը որակավորելու, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Բանկի Ֆինանսական Հաշվետվություններին կից վարկային պորտֆելը և այլ ակտիվները լուսաբանող ծանոթագրություններ 16-ում և 22-ում Բանկի Բաժնետիրոջ հետ համագործակցող կազմակերպությունների գծով առկա են էական կետրոնացումներ: Բանկի ղեկավարությունը հավաստիացնում է, որ նշված ակտիվները իրացվելի են, և վերջիններիս հետ կապված խնդիրներ չեն կարող առաջանալ, որոնք էական բացասական ազդեցություն կթողնեն Բանկի ֆինանսական վիճակի վրա:

Աուդիտոր

Կ. Ասսիլեան Kevork Assilian

ք. Երևան
26.04.2013թ.